

կաթողիկոսին եւ նորին աշակերտացն, յորոյ գալստենէ ուրախութիւն անպատում եղեւ ամենեցուն» (Դաւր. 398) :

Գիտցաւ Մովսէս կաթողիկոս գնահատել յանձին Մեւքիսեթի հոգեսէր կրօնաւորն եւ գիտուն եկեղեցականը. եւ յանձնարարեց իրեն դասախօսել Ս. Անանիայի Մենաստանին մէջ: «Եւ լինէր յորժամ Մեւքիսեթ վարդապետն կանխէր ի դաս եւ ի քարոզ, իրրեւ զյորձանս ուղիւից եւ հեղեղաց ընթանայր բանն ի բերանոյ նորա. յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ հիանային եւ բաղձային» (Դաւր. 398) :

Որչափ ոգեւորութիւն եւ հիացմունք ալ յառաջ բերէին Մեւքիսեթի դասախօսութիւններն ունկնդիրներու վրայ, արդիւնքը համեմատութեամբ անհաւասար պիտի ըլլար այնու, որ կը պահսէր անոնց նախաւոր պատրաստութիւն, ուստի եւ նաեւ հասկացողութիւն: Իմաստասիրութեան մասին կատարուած ձառերը անմարսելի էին աշակերտներուն եւ դասագրքերը զժուարամատոյց. նաեւ ժէ. դարուն իրրեւ դասագիրք կը տրուէր ուսանողներու ձեռքը յունարան դպրոցի արտադրութիւնները է. դարէն, որոնք եթէ իրենց «այլաշաւիղ եւ այլատեսակ եւ այլանուն եւ անընտել»¹⁸ բառերով անիմանալի էին նոյն իսկ ժամանակակիցներուն, ի^ոնչպէս կարելի էր յուսալ, թէ տասնեակ դար մը յետոյ

¹⁸ Դաւրիթ. 397: